ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

23.07.19 N ԱԽ/06.1/12024-19
Ձեր N ____________

«ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ»
ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԶԱԴՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զադոյան

Ի պատասխան Առողջապահության նախարարության 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի (ներառյալ 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման) հայտերի (այսուհետ՝ Հայտեր) նախագծերի շուրջ անցկացված հանրային քննարկման արդյունքների վերաբերյալ Ձեր գրության՝ հայտնում եմ հետևյալը.

1. Առողջապահության նախարարության կողմից հանրային քննարկումից հետո Հայտերում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես դեպի վերև վերանայվել է «Կոլոռեկտալ քաղցկեղի սկրինինգի իրականացման ծառայություններ» միջոցառման շրջանակներում մատուցվող «կոլոնոսկոպիա» ծառայության արժեքը:

2. Հայտերի վերանայված տարբերակը տեղադրված է Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում, ինչպես նաև վերացվել է Ձեր կողմից նշված՝ Հավելված 9-ի հետ կապված տեխնիկական խնդիրը:

3. «Հանրային առողջության պահպանում» ծրագրի «Առողջ ապելակերպի և ծխելու դեմ պայքարի իրականացում» և «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» ծրագրի «Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցում» միջոցառումները մեկնարկել են 2019 թվականին: Ինչ վերաբերում է նշված միջոցառումների արդյունավետության բարձրացման հետ կապված Ձեր առաջարկություններին, ապա դրանք հնարավոր կլինի քննարկել միայն 2019 թվականի փաստացի կատարողականի առկայության պարագայում:

4. Կլինիկական ուղեցույցների մշակման և ներդրման համար Հայտերում արդեն իսկ նախատեսված են միջոցներ «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» միջոցառման շրջանակներում:

5. «Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում միջոցների նախատեսումը պարտադիր է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի համաձայն:

6. ՄԺԴԴ ժամանակահատվածում Առողջապահության նախարարության ծախսային գերակայություններից է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարակիչ հիվանդություններ փոխանցող միջատները և տզերը Հայաստանի Հանրապետությունում առկա են՝ Առողջապահության նախարարությունը պետք է մշտապես քայլեր ձեռնարկի դրանց հնարավոր ի հայտ գալու հավանականությունը նվազեցնելու համար, իսկ 40 տոկոս միջոցների ավելացումն վերաբերում է «Իմունականխարգելման ազգային ծրագիր» միջոցառմանը, որի շրջանակներում նախատեսվում է հնգավալենտ պատվաստանյութը փոխարինել վեցավալենտով:

7. Սևանի և Գավառի բժշկական կենտրոնների սարքավորումներով հագեցման հետ կապված տեղեկացնում եմ, որ 2019 թվականի ընթացքում Առողջապահության նախարարությունը միջոցներ է նախատեսել 15 բժշկական կազմակերպությունների սարքավորումներով վերազինման, կառուցման և վերակառուցման համար, որը կրելու է նաև շարունակական բնույթ և շարունակվելու է նաև միջնաժամկետ ժամանակահատվածում: Ձեր առաջարկությունը կքննարկվի առաջիկա հնարավորության դեպքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

22.07.2019

X

VERIFIED OCSP 22.07.2019 15:31:30 GMT+4

Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416

Կատարող՝ Էսմա Դալլաքյան,
Ֆինանսաբյուջետային բաժին,
հեռ. 060 80 80 03 (17-07)